



Ազգաբարոյւթեան Trumpet's Sound **փող**

48-ԲԴ ՏԱԲԻ, ԱՄՍԲԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2017



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրայ Գույունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Յիսուս՝ մեր միջնորդը 3
Հովիւ Հրայ Գույունեան

Երբ Աստուած չի համագործակցիր... 4
Ռէքս Տիրլալ

Տէրը մեր պաշտպանը 7
Տօքս Եղիա Պապիկեան

Ո՛չ ես, ո՛չ հիմա, ո՛չ այնտեղ..... 9
Վարդան Սարգիսեան

Հաց եւ ձուկ 20,000 հոգիի համար . 13
Տօքս Զևարդ Պատարա

Զմեռը Հայաստանի մէջ 15
Հովիւ Հրայ Գույունեան

Կազմի նկարը՝ Հայկական խաչքար, լուսանկարող Վոն Նոպլեյ 2015թ.

Աղօթքի եւ փառաբանության Նիւթեր

- Փառք կուտանք Աստուծոյ Իր սիրոյն, ողորմութեան եւ առաջնորդութեան համար:
- Կ'աղօթենք Յուլիսի վերջին Lou ԱՆՃԷԼԷԷՆ Հայաստան այցելող մեր միսիոնարական խումբին համար:
- Կ'աղօթենք Հոկտեմբերին Աւստրալիայէն Հայաստան այցելող մեր միսիոնարական խումբին համար:
- Կ'աղօթենք հովանաւորուող ուսանողներու եւ կարիքաւոր ընտանիքներու համար:
- Կ'աղօթենք Հայաստանի մէջ բնակող Սուրիահայ փախստականներու համար:
- Կ'աղօթենք Աստուծոյ Խօսքի տարածման համար:
- Կ'աղօթենք, որ Տէրը գործածէ քրիստոնէական գրականութիւնը ի օրհնութիւն եւ շինութիւն ընթերցողներու համար:
- Կ'աղօթենք մեր աշխատակիցներու եւ Հայաստանի մէջ կատարուած ծառայութիւններու համար:

Յիսուս՝ մեր միջնորդը

«Քանզի մէ՛կ Աստուած կայ ու մէ՛կ միջնորդ Աստուծոյ ու մարդոց մէջտեղ, Քրիստոս Յիսուս մարդը» (Ա Տիմ. 2.5)

Մեր կեանքին մէջ յաճախ միջնորդներու կարիք կ'ունենանք: Մարդիկ իրենց ընկերներուն կը մեղադրեն իրենց հանդիպած դժուար խնդրի լուծմանը չմիջնորդելու համար: Երբեմն երաշխաւորողներու կարիք կ'ունենանք, երբ դրամատուներն գումար կ'ուզենք փոխ առնել, կամ երբ բժշկական միջամտութեան կարիք ունինք, կամ երբ դատարանի բարդ գործընթացի մը մէջ ենք, կամ երբ նոր գործի մը դիմած ենք:

Իսկ երբ մեղք կը գործենք եւ այն մեզ վնաս կը հասցնէ, արդեօ՞ք միջնորդի մը կարիք կ'ունենանք: Երբ կը զգանք թէ մեր եւ Աստուծոյ միջեւ եղած կապը ընդհատուած է, երբ Անոր սէրը կրկին գտնելու կարիք ունինք, երբ հոգեւորապէս կ'ազդուրուելու, մխիթարուելու եւ ներքին խաղաղութիւն ունենալու կարիք ունինք, կամ երբ բոլոր մարդիկ մեզ կը ւրեն եւ ոչ մէկու եւ ոչ մէկ բանի վրայ յոյս չկարողանանք դնել, կամ երբ մահուան անկողնու վրայ ըլլանք եւ անստոյգ ապագայի վախէն տառապինք, արդեօ՞ք այդ ժամանակ միջնորդի մը կարիք կ'ունենանք, թե՞ ոչ:

Սիրելի՛ բարեկամներ, ճիշդ ասոր համար Յիսուս աշխարհ եկաւ: Ահա թէ ինչու Ան Իր կեանքը տուաւ մարդկութեան համար: Ան մահացաւ, որպէսզի մենք ապրինք:

Աստուած սուրբ Աստուած է, ոչ ոք չի կրնար զԱստուած տեսնել եւ ապրիլ: Աստուծոյ փրկութեան ծրագիրը այն էր, որ Իր Որդին դրկէր, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ յալիտենական կեանք ունենայ:

Յիսուս եղաւ մեր միջնորդը: Մենք հաւատքով կը փրկուինք, Յիսուս Քրիստոսի միջոցով: Մեր եւ Աստուծոյ միջեւ եղած անջրպետը վերացաւ Յիսուս Քրիստոսի շնորհիւ: Ան Հայր Աստուծոյ մօտ մեզմէ իւրաքանչիւրին համար բարեխօսութիւն կ'ընէ:

Ահա Յիսուս ինչ աղօթեց քեզի համար.

«Բայց միայն անոնց համար չեմ աղաչեր, այլ բոլոր անոնց համար

ալ, որոնք անոնց խօսքով ինձի պիտի հաւատան. որպէս զի ամէնքն ալ մէկ ըլլան, ինչպէս դո՛ւն, ո՛վ Հայր, իմ մէջս՝ ու ես քու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան եւ աշխարհի հաւատայ թէ դուն դրկեցիր զիս: Այն փառքը որ դուն ինձի տուիր, ես անոնց տուի, որպէս զի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք. Ես՝ անոնց մէջ եւ դուն՝ իմ մէջս. որպէսզի իրենք կատարեալ ըլլան միութեան մէջ ու աշխարհի գիտնայ թէ դո՛ւն դրկեցիր զիս ու սիրեցիր զանոնք՝ ինչպէս զիս սիրեցիր: Ո՛վ Հայր, գանոնք որ դուն ինձի տուիր, կ'ուզեմ որ ուր որ ես ըլլամ, անոնք ալ ինձի հետ ըլլան, որպէս զի տեսնեն իմ փառքս, որ ինձի տուիր. վասն զի դուն զիս սիրեցիր աշխարհի սկիզբէն առաջ: Ո՛վ արդար Հայր, աշխարհ քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ եւ ասոնք ճանչցան թէ դո՛ւն զիս դրկեցիր: Քու անունդ անոնց ճանչցուցի ու պիտի ճանչցնեմ, որպէս զի այն սերը, որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ ու ես ալ անոնց մէջ» (Յովհ. 17:20-26):

Արդեօք զարմացա՞ր, Ան մեզ սիրող եւ ողորմացող Աստուածն է, մեզ սիրող Յիսուս Փրկիչն է, Ան մեր եւ Աստուծոյ միջեւ կանգնած մեր բարեխօսն է, ով կ'աղօթէ մեր միաբանութեան եւ սիրոյ համար՝ միաբանութիւն Իր եւ Հայր Աստուծոյ հետ, ոչ թէ միայն երկրի վրայ, այլեւ՝ Երկնքի մէջ:

Թող Աստուծոյ սերը սիրտդ ուրախութեամբ ու ցնծութեամբ լեցնէ այսօր:

Հ. Գ.

Երբ Աստուած չի համագործակցիր

Յայտնագործութիւն մը կայ, որ մեզմէ իւրաքանչիւրը անխուսափելիօրէն կ'ունենայ իր քրիստոնէական կեանքի ընթացքին: Այդ այն բանի բացայայտումն է, թէ Աստուած որքա՞ն անհամագործակցող կը թուայ, երբ խօսքը մեր անձնական կեանքերու համար մեր կազմած ծրագիրները իրականացնելու մասին կը վերաբերի: Մեզմէ շատերը որպէս սկսնակ հաւատացեալներ, երբ մեր ոտքերը դրինք քրիստոնէական ճամբուն մէջ, Աստուծոյ հետ հաղորդակցուելու բռուն եւ խանդա-

վառ ձգտում մը ունեցանք: Մենք սկսեցինք մտածել. «Հիմա, որ Աստուած կեանքիս մէջ է, ամէն ինչ ճիշդ իմ ուզածիս պէս պիտի ընթանայ: Որքա՛ն հրաշալի է Աստուծոյ ճանչնալը»: Այս միջոցը ի հարկէ իրականութենէն շատ հեռու է:

Ոմանք Աստուծմէ կը հիասթափուին իրենց պատահած ինչ-որ դժբախտ ողբերգութեան պատճառով, որուն մէջ կը նկատեն թէ Աստուած կարծես լիովին անտարբեր էր: Իսկ ուրիշներ Աստուծմէ կը հիասթափուին չպատասխանուած աղօթքներու եւ իրենց կեանքին մէջ պատահած յաճախակի յուսախաբութիւններու պատճառով: Ի վերջոյ, անոնք այն եզրահանգման կուգան, որ կարեւոր խնդիրներու շուրջ Աստուծոյ չի կարելի վստահել, կամ ալ հոգեւոր գաղտնի բանաձեւ մը կայ, որ իրենց յայտնի չէ, որը եթէ իմանային կարող պիտի ըլլային ինչ-որ կերպով Աստուծոյ ներգրաւել իրենց խնդրի մէջ եւ ունենալ Անոր համագործակցութիւնն ու ամբողջական աջակցութիւնը:

Գիրք գիրքի ետեւէ, խօսնակ խօսնակի ետեւէ բազմաթիւ առաջարկներ կուտան մեզի, բայց գործնականին մէջ մեր կեանքին մէջ կարծես թէ ոչ մէկ բան չի փոխուիր: Շփոթմունքի մէջ վերջ ի վերջոյ ոմանք կը սկսին հարցնել. «Ճիշդ ի՞նչ պէտք է ընեն, որպէսզի Աստուծոյ համագործակցութիւնը ունենան կեանքիս մէջ: Վերջ ի վերջոյ, այն ինչ կեանքիս մէջ կ'ուզեմ բարի եւ իրաւացի է»:

Շատ վտանգաւոր աստուածաբանութիւն մը տարածուած է, որը Աստուծոյն կը ներկայացնէ, որպէս Ալլատիին ունեցած կախարդական լապտերի ճինին նման փափաքներ կատարող անձնատրութեան մը: Ալլատիինը պարզապէս պէտք էր ձեռքերով լապտերը շփել եւ մէջէն ճինը դուրս կուգար՝ կազմ պատրաստ կատարելու իրաքանչիւր ցանկութիւն: Որոշ մարդկանց համար, քրիստոնէական կեանքի իմաստը այն է, որ իրենք վերջապէս բացայայտեն ու տիրապետեն Աստուծոյ իրենց ցանկութիւններու կատարելու ճիշդ բանաձեւին: Այս մօտեցման մէջ Աստուած կ'ընկալուի որպէս շահ բերող միջոց: Որքա՛ն յաճախ են մարդիկ ովքեր հիասթափուած են Աստուծմէ կ'աղաղակեն ըսելով. «Եթէ Աստուած այս կամ այն խնդրին մէջ զիս չի կրնար օգնել, ապա ինչի՞ս է պէտք»: Այս գաղափարախօսութիւնը Աստուծոյ կը տեսնէ, որպէս միջոց՝ թուացեալ կարեւոր կարիքները բաւարարելու համար:

Անոնք կը մոռնան թէ «Մեր Աստուածը Երկինքն է, Անիկա Իր բոլոր ուզածը ըրաւ» (Սաղ. 115.3):

Աստուած մեր բոլոր որոնումներու եւ փափաքներու վերջնական եւ միակ բաւարարող պատասխանն է, վերջնական նպատակն է: Եթէ Աստուած է վերջնական նպատակը, ապա Ան չի կարող օգտագործուիլ որպէս միջոց հասնելու այլ նպատակի, որը Իրմէ այն կողմ կը գտնուի: Աստուած ճանչնալէ այն կողմ վերջնակէտ գոյութիւն չունի: Որեւէ դրոսեւորում, որ Աստուծոյ կը հաւասարեցնէ օգտակար գործակիցի, որու շահարկումով անձը կը հաւատայ թէ կը կարողանայ երջանկանալ եւ լիարժէքութեան զգացում ունենալ, դատապարտուած է ձախողութեան: Աստուած մեզ այնքան շատ կը սիրէ, որ այսպիսի մանկական խաղի մէջ չի մտնէր մեզ հետ: Ան լռութեամբ կը սպասէ մեզ որ գիտակցինք, թէ հոգևոր հասունութիւնը տեղի կ'ունենայ միայն այն ժամանակ երբ կը հրաժարինք զինք մեր նպատակներուն հասնելու համար շահարկելէ եւ կը յանձնուինք Իր անսահման եւ խորհրդաւոր սիրոյն: Այս դասը իւրացնելու առիթները մեր կեանքին մէջ յաճախ կուզան ամենամոռայլ, ամենացաւալի եւ հիասթափեցնող պահերուն մէջ:

Այդ պահերէն իւրաքանչիւրին մէջ մենք որոշում կը կայացնենք, թէ արդեօ՞ք պիտի մերժենք Աստուծոյ համագործակցութիւնը, թէ՞ անձնատուր պիտի ըլլանք Իր խորհրդաւոր սիրոյն, որը ենթակայ չէ շահագործման: Ասոնք են ճշմարիտ աճի եւ հասունութեան պահերը:

Մեր փափաքած բաներէն հրաժարիլը, որոնց մասին մեծ պատկերացում ունինք հաւասար է մահանալու, սակայն սա իսկապէս ապրելու առաջին քայլն է: Երբ կը սկսինք յայտանաբերել, որ Աստուած մեր սեփական ծրագիրները առաջ տանելու համար համաձայն չէ համագործակցման, այդ ժամանակ է որ կը սկսինք Աստուծոյն տեսնել Իր ամբողջ գեղեցկութեամբ: Քրիստոսը շատ գեղեցիկ ամփոփեց ըսելով. «Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին» (Մատթ. 6.33):

Ռէքս Տիրլաւ



Տէրը մեր պաշտպանը

Սաղմոս 121

Մեր այս երկրաւոր պանդուխտ ճամբորդութիւնը միշտ ծաղկատաններէ, յաջողութիւններէ չ'անցնիր, երբեմն ալ կ'անցնի անդաստաններէ, փոթորիկներէ, ձախողութիւններէ: Քանի երկրի վրայ այսպիսի կեանք մը կ'ապրինք, ի՞նչ ընելու ենք, ի՞նչ է բալասանը, դեղը, այս նոռտ ու փշոտ կեանքին: Ինչպիսի՞ կեանք մը ապրելու ենք: Մեր ուղեցոյցը՝ Աստուծոյ Խօսքը, մեզի Դաւիթի օրինակը կուտայ: Դաւիթ հասած էր ախոյեանութեան եւ յաջողութեան գագաթնակէտին, Գողիաթը տապալելով, նուաճելով ազգերը եւ թագաւորութեան աստիճանի բարձրանալով: Սակայն Դաւիթ ալ խմեց կեանքի լեղի գաւաթէն, ինչպէ՞ս: Ան տարիներ հալածուեցաւ իր կնոջ հօրը կողմէն: Սատող զինք անդադար կը հալածէր որ սպաններ: Ան նոյնիսկ դաւաճանուեցաւ իր զօրապետէն, երկու տղաքը իր դէմ ելան եւ դժբախտաբար ան նաեւ ինկաւ մեղքի մէջ: Ինչպէ՞ս սուրբ եւ զօրաւոր անձնաւորութիւն մը, երկու մեծ մեղքերու մէջ մտաւ - բարոյական եւ փառասիրական: Դաւիթ ուզեց իր հպատակ ժողովուրդը համրել տալ գիտնալու անոնց թիւը եւ Աստուած զարկաւ անոր ժողովուրդին՝ հազարներ մեռցնելով:

Ի՞նչ է դասը այսօր: Դաւիթ գտած էր դեղը իր ցաւերուն: Ան 121-րդ սաղմոսը գրեց: Այս վիճակներուն մէջ աչքերս դէպի լեռները պիտի վերցնեն ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ: Ինչ ալ ըլլայ մեր երկրային վիճակները, մեր ցաւերը - հոգեկան, մտային, նիւթական... միակ բալասանը, կողմնացոյցը, մեր աչքերը դէպի լեռները վերցնել է, ուրկէ մեր օգնութիւնը պիտի գայ: Շուարունի կը մատնուինք, երբ մեր աչքերը կը դարձնենք աջ ու ձախ:

Երբ Հայաստան էի, կարգ մը ազգային առաջնորդներ ուզեցին, որ հեռատեսիլի վրայ իրենց հետ հարցազրոյց մը կատարենք: Հարցումը այս էր. «Կը տեսնես մեր վիճակը, ի՞նչ է լուծումը, ի՞նչ կը խորհիս»: Պատասխանս հետեւեալն էր. «Ես քաղաքագէտ մը չեմ, բայց իբրեւ Աստուծոյ մէկ զաւակը, երկու պայմաններ եթէ գործադրէք կը խորհիմ թէ Հայաստանը կը շտկուի: Նախ, առաջնորդները թող զիրար բռնեն

ձեռք ձեռքի, երկրորդ՝ երբ ձեռք ձեռքի բռնեն, թող վեր նային, այն ատեն Հայաստան կը շտկուի: Հայաստանի օգնութիւնը, լուծումը միայն վերէն է եթէ պայմանները լրացնէք»: Թող վերցնեն իրենց աչքերը դէպի Արարատ լեռը: Այս օրերուս՝ շրջապատուած ենք մեղսալից միջավայրով՝ ինչպէս Նոյի ատենն ալ: Անբարոյականութիւն եւ ամէն տեսակի մեղք յառաջացած է: Աստուած արդար Նոյը եւ անոր ընտանիքը ազատեց ջրհեղեղէն եւ անոնց տապանը հանգչեցուց Արարատ լեռան վրայ: Հայ ժողովուրդը կ'ուզէ ազատուիլ եւ մաքուր մնալ: Մեր աչքերը վերցնենք դէպի Արարատ լեռը եւ ազատութեան Աստուածը մեզի օգնութեան պիտի հասնի:

Աքաաբ թագաւորի օրերուն, երբ Իսրայէլի ժողովուրդը շուարած էր, Եղիա մարգարէն հաւաքեց 950 հեթանոս մարգարէներ Կարմեղոս լեռան գագաթը եւ ըսաւ. «Սինչեւ ե՞րբ դուք երկու մտքի վրայ պիտի կարգաւ եթէ Եհովան է Աստուած, Եհովան պաշտեցէք, եթէ Բահաղ է Աստուած, Բահաղը պաշտեցէք»: Եղիա աղօթեց Աստուծոյ եւ Աստուած կրակ իջեցուց եւ փաստեց որ իսկական, ճշմարիտ Աստուած Եհովայ Աստուածն է: Ուրեմն մեր այս երկրային պանդուխտ կեանքի մէջ, երբ կ'երկմտինք, երբ կը շուարինք, ի՞նչ է կարելիութիւնը: Նայինք հաւատքով Կարմեղոս լեռան, ուր Եհովայ յայտնուեցաւ եւ ուրկէ պիտի գայ մեր օգնութիւնը հարիւր տոկոսով:

Կը պատահի որ երբեմն մեր մէջ ալ հակաճառութիւն կը սկսի, այդ պարագային մեր աչքերը վերցնենք Սինա լեռան, ուր Աստուած յայտնուեցաւ Մովսէսի, եւ տուաւ անոր Տասնաբանեան: Աստուած մեզի քրիստոնէական սկզբունքներ տուած է Սուրբ Գիրքին մէջ, որպէսզի այս կեանքը Իրեն համար ապրինք եւ ոչ մեր անձերուն համար:

Լեռ մը եւս յիշենք, մասնաւորաբար հոգեւորներուս համար: Մենք կը վկայենք որ Աստուծոյ շնորհով Սուրբ Հոգիէն ծնած ենք ու հոգեւոր կեանքը կ'ապրինք, սակայն իրողութիւն որ Աստուծոյ պատկանելէն ետքն իսկ երբեմն կ'ունենանք հոգեւոր սրտխառնուքներ, անհանգրստութիւններ եւ երբեմն ալ կը վրդովինք: Ի՞նչ պէտք է ընել: Մեր աչքերը վերցնենք Մօրեայ լեռան: Երբ Աստուծոյ զաւակն ենք կ'ըսենք եւ լման նուիրուած չենք Իրեն, կարգ մը սովորութիւններ կը շարունակենք, լման խաղաղութիւն չենք գտներ: Այսպէս ալ էր Աբրահամ մինչեւ որ Աստուած իրեն տրվեցուց լման յանձնուիլ: Անոր ծերութեան ա-

տեն հրաշքով զաւակ շնորհեց եւ ետքը խնդրեց որ զաւակը Մօրեայ լերան վրայ գոհէ Իրեն: Այս ըսել էր որ Աբրահամ ամէն ունեցածը Աստուծոյ պէտք էր յանձնէր եւ Աբրահամ ալ փաստեց, եւ Տէրը ետ շնորհեց իր զաւակը: Հոգեւոր կեանքի քաղցրութիւնը, հանգստութիւնը, խաղաղութիւնը ամէն բան Տէրոջը վրայ ձգել է, ամէն բան Անոր յանձնել է, «Քու կամբդ օրհնեալ ըլլայ» ըսել է: Բոլոր վիճակներու մէջ ըսել. «Տէրը ասկէ տեղեակ է, Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ»: Այն ատեն գլուխդ բարձին վրայ կը դնես եւ կը քնանաս: Մեր բոլոր հարցերը յանձնենք Աստուծոյ եւ մեր աչքերը վերցնենք Մօրեայ լերան ուրկէ մեր օգնութիւնը պիտի գայ:

Մենք կ'ապրինք 20-րդ դարու վերջաւորութեան եւ կը սպասենք Քրիստոսի վերադարձին: Ան ինչպէս Չիթենեաց լերան վրայէն համբարձաւ, այդպէս ալ ետ պիտի գայ: Բարձրացնենք մեր աչքերը դէպի Չիթենեաց լեռը: Աշխարհի վիճակը կը վատթարանայ, բոլոր նշանները այդ կը ցուցնեն, որ Տէր Յիսուս պիտի վերադառնայ: Երբ մեր աչքերը վերցնենք Արարատ լերան՝ ազատութեան Աստուծոյն, Կարմեղոս լերան՝ իրական ճշմարիտ Աստուծոյն, Սինա լերան՝ կողմնացոյցի Աստուծոյն, Մօրեայ լերան՝ Աբրահամի Աստուծոյն, մեր աչքերը վերցնենք նաեւ Չիթենեաց լեռը, մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի մօտալուտ գալուն:

Տօք՝ Եղիա Պապիկեան

«Աստուածաշունչը մեզի տրուած է, ոչ թէ մեր գիտելիքը շատցնելու համար, այլ մեր կեանքերը փոխելու համար» (Տ. Լ. Մուտի):

«Ո՛վ Աստուած, փրկէ մեզ Հանգիստ կեանք վարելու փափաքէն մինչ մեղաւորներ դժոխքին մէջ կը կորսուին» (Չ. Սփրրճըն):

«Մեր խնդիրը պատգամը ընդունելի դարձնելը չէ, այլ՝ հասանելի» (Վէնս Համլըր):

«Մենք շատ զբաղուած ենք աղօթելու համար, հետեւաբար շատ զբաղուած ենք զօրութիւն ստանալու համար: Մենք չափազանց ներգրաւուած ենք գործունէութիւններով, սակայն քիչ բանի կը հասնինք, շատ ծառայութիւններ ունինք, սակայն քիչ դարձի եկողներ, շատ միջոցներ, սակայն քիչ արդիւնքներ» (Ր. Ա. Թորրի):

Ո՛չ ես, ո՛չ հիմա, ո՛չ այնտեղ

Հայր մը որդի ունեցաւ, անոր անունը «Հիմա» դրաւ: «Հիմա»-ն կը սիրէր հօր ըսածները նոյն վայրկեանին կատարել, հարցեր չէր տար, չէր վիճաբանէր, չէր ուշացնէր: Երբ հայրը կ'ըսէր. «Ծաղիկներուն ջո՛ւր տուր», «Հիմա»-ն կը պատասխանէր. «Հիմա կ'ընեմ», երբ Հայրը կ'ըսէր. «Փայտերը կացի՛նով կտրէ՛», «Հիմա»-ն կ'ըսէր. «Անպայման»: Շուտով ծնաւ 2-րդ զաւակը: Հայրը անոր անուանեց՝ «Ես»: «Հիմա»-ն եւ «Ես»-ը լաւ եղբայրներ էին: Երբ պէտք կ'ըլլար ինչ-որ գործ ընել, «Հիմա»-ն միշտ պատրաստ էր, իսկ «Ես»-ը՝ ւաւելի նուիրուած կ'ըսէր. «Ես կ'ընեմ, զիս դրկէ»: Ծնաւ նաեւ 3-րդը՝ «Այնտեղ»-ը: «Այնտեղ»-ը միշտ կ'ըսէր. «Այնտեղ կ'երթամ, պատրաստ եմ քեզ չսիրողներու մօտ ալ երթալ եւ քու ըսածներդ իրենց փոխանցել»: Հայրը, «Հիմա»-ն, «Ես»-ը ու «Այնտեղ»-ը համերաշխ էին, մինչեւ որ ծնաւ 4-րդ զաւակը: Հայրը անոր անունը «Ոչ» դրաւ: «Ոչ»-ը կը տարբերուէր միւս եղբայրներէն: Շուտով անոնց սորվեցուց «ո՛չ» ըսել եւ անոնց անուններուն դիմաց աւելցուց իր անունը, եւ այսպէս՝ «Հիմա»-ն դարձաւ՝ «Ո՛չ հիմա», «Ես»-ը դարձաւ՝ «Ո՛չ ես», «Այնտեղ»-ը՝ «Ո՛չ այնտեղ»: Այդ օրէն ի վեր տունը դարձաւ դժոխք: Հայրը ամէն օր կը լսէր այսպիսի արտայայտութիւններ. «Ո՛չ հիմա», «Ո՛չ ես», «Ո՛չ այնտեղ»: Ի՛նչ տխուր էր հօր սիրտը:

Սա շինծու պատմութիւն է, որուն մէջ թաքնուած է պատգամիս ողջ իմաստը, որը կը կարծեն շատ արդիական է այսօրուայ հաւատացեալներուն համար: Սա մեր նկարագիրն է, մեր պատմութիւնն է: Այն օրը, երբ Տէր Յիսուսին եկանք, պատրաստ էինք ամէն բանի, մեր անձն ու ունեցուածքը Իրեն տրամադրած էինք, պատրաստ էինք նոյնիսկ թշնամի երկիր երթալ եւ Աւետարանը քարոզել, բայց ինչ-որ բան պատահեցաւ եւ ամէն ինչ այլ ընթացք ստացաւ:

Այս երեք զաւակները կը խորհրդանշեն քրիստոնեայի կեանքին մէջ եղող երեք մեղքեր, մեղքեր որոնք բոյն դրած են մեր ներսիդին.

1. «Ո՛չ հիմա»-ն ծուլութեան մեղքն է. յետոյ կ'ընեմ, յետոյ կ'այցելեմ, յետոյ կը ծառայեմ...:

2. «Ո՛չ ես»-ը անտարբերութեան մեղքն է. թող ինքը ընէ, ինչո՞ւ ես, թող անիկա նուիրաբերութիւն ընէ, ինչո՞ւ ես, թող ինքը իր մեքեման տրամադրէ, ինչո՞ւ ես...:
3. «Ո՛չ այնտեղ»-ը կամակորութեան մեղքն է. այո՛ կ'ընեն, բայց ո՛չ այնտեղ, այնտեղ չեն՝ երթար, այնտեղ չեն՝ հաւնիր, իմ պարգեւերու համաձայն չէ, սրտովս չէ:

Ի՞նչ կ'ըլլար, եթէ Տէրոջ «Որո՞ւ դրկեմ եւ մեզի համար ո՞վ կ'երթայ» հարցին Եսային պատասխանէր. «Ո՛չ ես, ո՛չ հիմա, ո՛չ այնտեղ»: Ի՞նչ կ'ըլլար, եթէ Եսային ըսէր. «Տէ՛ր Աստուած, շնորհակա՛լ եմ, որ զիս Քու շնորհքովդ մարգարէ կարգած ես, սակայն ես գիտեմ, որ Դուս ուրիշ մարգարէներ ալ ունիս, անոնց դրկէ՛, պատրաստ չեն՝ երթալու այնտեղ, Իսրայէլին չեն՝ երթար, խստապարանոց ժողովուրդ մըն է...»:

Ի՞նչ կ'ըլլար, եթէ Տէրոջը խորանին՝ ոսկիէ, արծաթէ ու պղինձէ աւօթներ եւ կարասիներ պատրաստելու համար Մովսէսի կոչին ի պատասխան հրեայ ժողովուրդը ըսէր. «Ո՛չ մենք, ո՛չ հիմա, ո՛չ այդ նպատակով: Այս ոսկեղէնը եզիպտացիները մեզի տուած են, այս բոլորը մերն է, երբ հասնիս Աւետյաց երկիր, այնտեղի ոսկիէն ինչքան կ'ուզես խորանին համար վերցուր, բայց ասոնց մի՛ դպնար, մեր ու մեր գաւակներուն համար են»:

Ի՞նչ կ'ըլլար, եթէ Նէեմիան ժողովուրդին ըսէր. «Տէրոջ քաղաքի պարիսպները փլած են, դռները վառած են: Խայտառակ վիճակի մէջ ենք: Պէտք է կառուցենք այն, շինարարական աշխատանքները անյապաղ պէտք է սկսիլ», - ու ժողովուրդը Նէեմիային ըսէր. «Ո՛չ հիմա, ո՛չ մենք, ոչ այնտեղ, թո՛ղ մեզ յաջորդող սերունդը մտածէ. ինչպէ՞ս դարձեալ վերադառնանք Երուսաղէմ, չենք ուզեր գէշ յիշողութիւնները վերյիշել, բարեխոնեան կեանքին արդեն վարժուած ենք»:

Փառք Աստուծոյ, որ այդպէս չեղաւ, այսուամենայնիւ, ի՞նչ կ'ըլլար եթէ այդպէս ըլլար: Պարզապէս Տէրոջը գործը երկրի վրայ կը տուժէր, կը կանգնէր, խորանը չէր կառուցուէր, Երուսաղէմի պատերը այդպէս փլած կը մնային, Իսրայէլի ժողովուրդը եւ շրջապատող ազգերը առանց մարգարէութեան կը մնային...:

Ի՞նչ կ'ըլլայ, եթէ մենք շարունակենք այսպէս ու չապաշխարենք մեր ծուլութեան, անտարբերութեան ու կամակորութեան մեղքերէն: Ի՞նչ

կ'ըլլայ եթէ ըսենք, թէ չենք ուզէր անտարանչութիւն ընել, նուիրաբերութիւն կատարել Տէրոջ գործին, միսիոնարներուն ու միսիոնարական կազմակերպութիւններուն... պարզապէս Աստուծոյ գործը կը տուժէ, բայց հարցը որուն ես ու դուն պէտք է ուշադրութիւն դարձնենք, այն է, որ Աստուծոյ գործը տուժելու պատճառը ես եւ դուն պիտի ըլլանք:

Հիմա եկէք այս մէկ հարցին շուրջ մտածենք, որը ամենէն կարեւորն ու ճակատագրականն է: Ի՞նչ կ'ըլլար, եթէ Հայր Աստուած ըսէր. «Մարդկանց մեղքին համար որո՞ւ դրկեմ, ո՞վ անոնց մեղքը կը վերցնէ իր վրայ, ո՞վ Իմ բարկութեանս բաժակը կը խմէ մինչեւ յատակը...», եւ Տէր Յիսուս պատասխանէր ըսելով. «Ո՛չ ես, ո՛չ հիմա, ո՛չ այնտեղ»: Սակայն, բիրտ փառք Աստուծոյ, որ Տէր Յիսուսը անտարբեր չէր, Իր հանգիստը փնտռող չէր, Իր կամքը պարտադրող չէր...: Ան ընդունեց Աստուծոյ կանչը, եկաւ ճիշդ ժամանակին, եկաւ որպէս լոյս այս աշխարհ: Եթէ Յիսուս մեզ պէս վարուէր մենք բոլորս ալ կորած պիտի ըլլայինք յաւիտեան եւ յոյս մըն ալ պիտի չունենայինք:

Աստուծոյ Խօսքը Յիսուսի մասին կ'ըսէ. «Որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը, հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով եւ մարդու կերպարանքովը Ինքզինք խոնարհեցուց, մինչեւ իսկ մեռնելու յօժարեցաւ ու այն ալ խաչի մահուամբ» (Փիլիպ. 2:6-8):

Թերեւս Աստուծոյ գործի եւ Աստուծոյ զաւակներուն հանդէպ անտարբեր չես, առաջիններէն ես, որ կ'արձագանքես, թերեւս ծուլութեան մեղքն ալ չունիս, Աստուծոյ թագաւորութիւնը քեզի համար առաջնային է, բայց կամակոր ես, քու ուզածդ կը թելադրես Աստուծոյ: Եկէք սքափուիմք ու այս երեք մեղքերէն ապաշխարենք, Յիսուս շուտով պիտի գայ, եւ երանի է այն հաւատացեալը, որուն Տէրը պատրաստ պիտի գտնէ զինք դիմաւորելու ատեն:

Վարդան Սարգիսեան



Հաց եւ ձուկ 20,000 հոգիի համար (Յովհ. 6.1-14)

Յովհաննէսը կը գրէր բոլորի համար: Ան Յիսուս Քրիստոսին կը ներկայացնէ որպէս Աստուած՝ Ամենակարող Աստուած:

Աշակերտները մոռցած էին, որ իրենց հետ Տէր Յիսուսը ունէին, ով Ամենակարող Աստուած է:

Փորձենք դիտել այս հրաշքը երեխայի աչքերով. Ի՞նչ կը մտածէր այդ տղան առաւօտեան տունէն դուրս գալու ատեն: Մայրը իր մասին հոգ տարած էր՝ ճաշի համար անհրաժեշտ ուտելիք դնելով:

Փիլիպպոս

Փիլիպպոսը պատրաստ չէր տալու 200 դահեկան. Ան ըսաւ. «Երկու հարիւր դահեկանի հաց չի բաւեր, որպէս զի ամէն մէկը քիչ մը առնէ»: 2,000 դահեկան անհրաժեշտ էր: Անոնք ընդամենը 10%-ը ունէին: Փիլիպպոսի համար այդ չափազանց քիչ էր, որպէսզի Տէրոջը տար՝ ժողովուրդին կերակուր գնելու համար: Փիլիպպոսը արդէն տեսած էր առաջին հրաշքը, այն է՝ ջուրը գինիին դարձնելը: Միաժամանակ ան երկու բժշկութիւն տեսած էր՝ ազնուականի որդիի բժշկութիւնը Կափառնայումի մէջ (Յովհ. 4:46-54) եւ անդամալոյծի բժշկութիւնը Բեթիեզղայի մէջ (Յովհ. 5:1-8):

Անդրեաս

Անդրեասն էր այն աշակերտը, ով նկատեց որ տղան տալու բան ունէր: Անդրեասը մօտեցաւ ճիշտ անձին եւ անոր ամբողջ տուածը բերաւ Տէր Յիսուսին:

Անանուն տղան

Ան գրեթէ ոչինչ չունէր: Տղայի ճաշը երեւի մէկ դահեկանի՝ 10%-էն ալ քիչ էր: Ասիկա կը նշանակէ թէ աշակերտները տղայէն 2,000 անգամ աւելին ունէին: Տղան (հաւանաբար դեռ չէր տեսած Տէր Յիսուսի հրաշքները) տուաւ պահանջուածի միայն 0.0005%-ը: Քիչը շատ է, եթէ այն Աստուծոյ ձեռքերուն մէջ է: Այս տղայի համբարը տարածուեցաւ

ամբողջ աշխարհով մէկ, քանի որ ան պատրաստ էր տալու իր ունեցած քիչը: Ան սկսաւ իր ունեցածով: Աստուած կը սկսի գործել մեր գտնուած կէտէն ու մեր ձեռքերուն մէջ եղածով:

Աստուծոյ ապահովումը

Աստուած մեզի անյայտ գոյգի մը որդի մը պարգեւեց, ով պիտի դառնար Աստուծոյ ծրագրի մէկ մասնիկը: Աստուած ամէն ինչ կը դասաւորէր: Ան տղայի հօր համար աշխատելու հնարաւորութիւններ ստեղծեց, ըստ ամենայնի՝ ձկնորսութիւն: Աստուած տղայի մօրը նըրբազգաց դարձուցած էր իր որդիի կարիքներուն հանդէպ: Ան որդիին համար ճաշ պատրաստած էր, հաց թխած էր եւ ձուկ պատրաստած էր, որը երեւի հայրը որսած էր: Տղան ճիշտ ժամին ճիշտ տեղն էր: Արդէն ուշ էր, սակայն տղան դեռ չէր ճաշակած ուտելիքը: Ան տուաւ ինչ ունէր: Ան շատ բան չտուաւ, այլ՝ իր ունեցած ամէն ինչը: Ան ամէն ինչ տուաւ Տէր Յիսուսին:

Քիչը Տէր Յիսուսի ձեռքերուն մէջ

Եթէ աշակերտները փորձէին ժողովուրդին կերակրել այդ տղայի գոհաբերածով՝ առանց Յիսուսի գօրութեան, միայն մէկ մարդ պիտի կըշտանար այդ օրը: Մնացած բոլորը քաղցած պիտի մնային:

Ուրէն Ուիլսոյին ըսած է. «Բաղցած աշխարհը կը սնուի դատարկ սնունդով, մինչդեռ մենք անոնց կը գրկենք Կենաց Հացին»:

Տէր Յիսուսը բազմապատկեց

Տէր Յիսուսը բազմապատկեց տղայի տուածը: Ան չբազմապատկեց այն, ինչ աշակերտները յօժար չէին տալու: Տէր Յիսուսը՝ որպէս Աստուած, կարող է քարէն հաց հանել, նոյնիսկ՝ ոչինչէն կրնայ հաց հանել: Ան ամէն ինչի Ստեղծիչն է, սակայն Ան գերադասեց քիչէն շատը մէջտեղ բերել:

Sopp. Չեսլոյ Պասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)



Ձմեռը Հայաստանի մէջ

Կը յիշեմ առաջին այցս Հայաստան 1998 թուականին: Ես ստիպուած էի ետիս թողնել կնոջս, երկու զաւակներուս, ազգականներուս, աշխատանքս, եկեղեցիս... ճամբայ ելայ վստահ չգիտնալով թէ ինչու կերթամ եւ ինչ պէտք է ընեմ այնպիսի երկրի մը մէջ, որ առաջին անգամ է որ պիտի ըլլամ, սակայն Աստուծոյ կանչը այնքան ուժեղ եւ յստակ էր որ պէքս է հնազանդէի, սակայն սրտիս խորքին մէջ կ'ուզէի մնալ իմ սիրելի մարդկանց մէջ, ապահով երկրիս մէջ եւ վայելել Աստորալիոյ ամառը:

Ես պէտք է վստահ ըլլայի, որ հետս ունէի բոլոր անհրաժեշտ հագուստները, գլխարկս, քնելու պարկս, վերարկուս եւ հարմարավէտ կօշիկներս:

Օդակայանին մէջ ընտանիքի անդամներուս եւ մօտիկ ընկերներուս դժուար հրաժեշտ մը տալէ ետք ուղեւորուեցայ Երեւան: 38 ժամանոց թռիչք էր:

Կազմակերպութեան մը հետ պայմանաւորուած էի որ այցելէինք տարեց մարդկանց, որպէսզի աւելի մօտիկէն ծանօթանամ անոնց վիճակներուն: Ոմանք պարբերաբար սնունդ, հագուստ եւ բժշկական օգնութիւն կը ստանային, եւ երբեմն ալ կամաւորներ կ'այցելէին զանոնք լոգցնելու համար, սակայն ոչ ձմռանը, քանի որ տաք ջուր չունէին, ոչ ալ տունը տաքցնելու հարմարանքներ:

Մեզ հետ ունէինք վարորդ մը եւ բուժքոյր մը, որոնք ընկերացան մեզի մեր առաջին այցելութեան համար: Կանգնեցանք տասը հարկանի հին շէնքի մը դիմաց, օդի ջերմաստիճանը -20 էր, այնպիսի ցուրտ մըն էր, որ կեանքիս մէջ երբեւէ չէի տեսած, փողոցը ամբողջովին ձիւնածածկ էր, ծառերը գեղեցիկ տեսք ստացած էին:

Երեքս ալ շէնք մտանք եւ ուզեցինք օգտուիլ վերելակէն: Այդ վերելակը կեանքիս մէջ տեսած ամէնանեղ վերելակներէն մէկն էր, աւելի նախատեսուած էր մէկ անձի համար. եթէ չորս հոգիով մտնելու ըլլայինք, երեւի տեղէն չէր շարժէր: Հասանք 5-րդ հարկը: Ինձի ըսուեցաւ որ դուրսը սպասեմ, մինչեւ որ բուժքոյրը ներս մտնէ ու ամէն բան կար-

գի բերել: Դուրսը սպասեցի, շատ ոգեւորուած էի, լուսանկարչական գործիքս արագ հանեցի, որպէսզի նկարեմ այն առաջին անձին, որուն պիտի հանդիպէի այս այցիս ժամանակ: Ինձի ըսուած էր որ ան միայնակ ապրող ծերունի մըն էր եւ որ իրեն շաբաթը մէկ կ'այցելէին: Դուրսը երկար սպասելէ ետք, ես անհամբեր դարձայ: Բուժքոյրը դուրս եկաւ եւ վարորդի ականջին մի քանի բառ փսփսաց եւ դարձեալ ներս մտաւ, ես հարցուցի թէ արդեօք ամէն ինչ լաւ է եւ ան ըսաւ թէ ծերունին արդեն մահացած էր: Բայց ես յամառեցի որ ներս մտնեմ ու տեսնեմ այդ մարդուն, քայլերս առաջ տարի ու 2 x 4 մեքրի վրայ սենեակ մը մտայ: Իր դէմքի գոյնէն հասկցայ որ մի քանի օր է արդեն մահացած էր, եւ բուժքոյրը հարցուցի թէ ինչէ՞ն մահացած էր, ան ալ ըսաւ թէ քնացած ժամանակ ցուրտէն սառչած էր եւ այդ պատճառով մահացած էր:

Անտուններու եւ տարեցներու մեծամասնութիւնը իրենց տունը տաքցնելու հարմարանք կամ միջոցներ չունին: Այս բոլորը տեսնելով «Հայ քրիստոնէական առաքելութեան» առաջին գործերէն մէկն այն եղաւ որ Աստրալիայէն 40 հատ ջեռուցիչներ դրկեց Հայաստան այսպիսի մարդկանց համար: Այսօր ԱՄՄ-ն տարեկան \$15000.00-էն աւելի գումար կը ծախսէ միայն ձմեռուայ ջեռուցում ապահովելու համար կարիքաւոր ընտանիքներուն եւ երեխաներուն որոնք մեր խնամակալութեան ներքոյ կը գտնուին: Անոնցմէ շատերը երկաթեայ կամ թիթեղեայ տոմիկներու մէջ կը բնակին:

Մենք կ'ուզենք մեր շնորհակալութիւնը յայտնել բոլոր անոնց որոնք անցեալին մէջ մեզ օգնած են: Հայաստանի մէջ ձմեռը 5 ամիս կը տեւէ, երկրի որոշ հատուածներուն մէջ մինչեւ -40 կը հասնի: Կը խնրեմ ձեզ որ յիշեք Հայաստանի ցուրտը եւ աղօթեք կարիքաւորներու համար: Կան շատ կերպեր որոնցով կարող եք օգնել Հայաստանի մէջ ապրող կարիքաւոր ընտանիքի մը, եւ մենք շատ ուրախ պիտի ըլլանք ձեզ օգնել գտնել այդպիսի ընտանիքներ:

Հ. Գ.